

ԱԶԴԱՐԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ՔՈՒԷՅԹԻ ԵՒ ԱՐԱՔԱԿԱՆ ԾՈՑԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԹԵՄԻՆ
P.O.Box: 8157, Salmiyeh 22052- Kuwait. Tel: 965-25614392, Fax: 965-25638312, e-mail: prelacy@armenianprelacykw.org

ՆՈՐ ՇՐՋԱՆ, 2. Տարի, Թիւ 245, Ուրբաթ, 22 ՕԳՈՍՏՈՍ, 2014

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ ՔՈՒԷՅԹԻ ՄԷՋ

Կազմակերպութեամբ՝ Քուէթի Ս. Վարդանանց Եկեղեցւոյ թաղական խորհուրդին եւ օժանդակութեամբ՝ տիկնանց յանձնախումբին, Ուրբաթ, 15 Օգոստոսի առաւօտուն մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով:



Պատարագը մատուցեց եւ օրուայ պատգամը փոխանցեց թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերպ. Տ. Մասիս Ծ. Վրդ. Զօպուեան:

Իր քարոզին մէջ Հայր Սուրբը խօսեցաւ Աստուածամօր տիպարին եւ եկեղեցւոյ կեանքին մէջ անոր ունեցած իւրայատուկ ներկայութեան մասին: Հայր Սուրբը շեշտեց Մարիամ Աստուածածնի փրկագործական խորհուրդին մէջ ունեցած իւրայատուկ դերակատարութիւնը, անդրադարձաւ անոր մայրական կոչումին, հաւատարմութեան ու իր Միածին Որդիին մօտ մշտական բարեխօսութեան՝ դառնալով խորհրդանիշ քրիստոնէական վեհ առաքինութիւններու: Հայր Սուրբը իր պատգամը եզրափակեց ըսելով, որ այսօր եկեղեցին իբրեւ մայր՝ Քրիստոսի խորհրդական մարմինը, իրեն կը



հրաւիրէ բոլոր մայրերը՝ եկեղեցի առաջնորդելու իրեց զաւակները, որպէսզի անոնք Աստուծոյ շունչին ու Ս. Հոգւոյն շնորհներով աճին ու կազմաւորուին, պահեն իրենց կրօնական ու ազգային հարստութիւնները եւ անոնց մէջ ամրապնդուի ազգային գիտակցութիւնը:

Պատարագի աւարտին տեղի ունեցաւ խաղողօրհնէքի յատուկ արարողութիւն:

ՀԱՅԿԱԿԱՆ

Հայաստանի Եւ Վրաստանի Վարչապետները Յայտարարութիւն Պիտի Կատարեն

Վարչապետ Յովիկ Աբրահամեանի հրաւերով 21-22 Օգոստոսին պաշտօնական այցելութեամբ Հայաստան կը հասնի Վրաստանի վարչապետ Իրաքլի Դարիպաշվիլին, ըսուած է Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան Չորեքշաբթի օր հրապարակած պաշտօնական հաղորդագրութեան մէջ:

Այցելութեան ծիրին մէջ նախատեսուած են Վրաստանի վարչապետին հանդիպումները Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանի, Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակեանի, վարչապետ Յովիկ Աբրահամեանի եւ բարձրաստիճան այլ պաշտօնատարներու հետ:

Հայաստանի եւ Վրաստանի կառավարութիւններու ղեկավարներու դնփակ հանդիպումին պիտի յաջորդէ ընդլայնուած կազմով հանդիպումը:

Իրաքլի Դարիպաշվիլի պիտի այցելէ Ծիծեռնակաբերդ՝ յարգանքի տուրք մատուցելու Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին: Ան նաեւ պիտի այցելէ Մատենադարան:

Կառավարութեան մամլոյ կէդրոնին մէջ Հայաստանի եւ Վրաստանի վարչապետները յայտարարութիւն մը պիտի ընեն:

Մովսէս Յակոբեան. «Հպարտ Եմ, Որ Մեր Նախագահը Հանդիպման Գացած Էր «Երկաթէ Շերեփով»

Վերջին շրջանին հակառակորդին կողմէ կատարուած հետախուզական ներթափանցման փորձերը եւ սահմանային գիծին վրայ զինուորական սարքերու կուտակումները նպատակ ունէին ապակայունացնել իրավիճակն ու հոգեբանական ճնշում բանեցնել զինուորներուն վրայ: Այս մասին Ստեփանակերտի մէջ լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին յայտարարեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար Մովսէս Յակոբեան: «Ազրպէյճան պարզապէս սպառնալիքի միջոցով փորձած է մեզ վախցնել, զինուորական սարքերը առջեւ մղելով, փորձելով հասկցնել, որ անմիջապէս վաղը պատերազմը պիտի սկսի: Մակայն ատիկա արդիւնք չէ տուած, որովհետեւ այդ սպառնալիքը կարճ տեւած է: Մեր գործողութիւններուն շնորհիւ արդէն 5 Օգոստոսէն հակառակորդը ետ քաշած է ուժերը», ըսաւ ան:

Յակոբեանի խօսքով, յուլիսի վերջաւորութեան եւ Օգոստոսի սկիզբը հակառակորդի իրականացուցած 7 հետախուզական գործողութիւնները իրականացուցած են Ազրպէյճանի յատուկ ստորաբաժանման անդամները, որոնք պատրաստուած են Կիպրոսի մէջ: Այս ընթացքին հակառակորդի զինուորներէն 36-ը սպաննուած են, հաստատեց նախարարը՝ նշելով որոշ անուն-մականուններ կան: Ըստ Մովսէս Յակոբեանի, եթէ նախորդ տարուան այս ժամանակահատուածին մէջ հակառակորդը արձակած է 7560 կրակոց, այս տարի այդ թիւը կը

հասնի 17,903-ի: «Մենք երբեք անիմաստ չենք կրակեր, կը կրակենք այն ժամանակ, երբ անոր անհրաժեշտությունը կ'ըլլայ, եւ կրակելու ժամանակ ալ կը փորձենք կրակել դիպուկ», ըսաւ ան:

Խօսելով Ագրպէճանի, Հայաստանի եւ Ռուսիոյ նախագահներու Սոչիի մէջ տեղի ունեցած եռակողմ հանդիպումին մասին՝ նախարարը նշեց. «Հպարտ եմ, որ մեր նախագահը հանդիպումին գացած էր «երկաթէ շերտով» եւ հպարտ եմ անոր համար, որ ատիկա նաեւ մեր զինուորներուն շնորհիւ էր»: Նախարարը անդրադարձաւ նաեւ Ռուսիոյ կողմէ Ագրպէճանին պարբերաբար զենք վաճառելուն: Ան նշեց, որ թէեւ ատիկա վատ է, սակայն ատիկա զինք չի վախցնէր:

Պատասխանելով այն հարցումին, թէ ինչպիսի՛ գնահատական կու տայ հայ գերին «հարցաքննած» ագրպէճանցի հրամանատար, զօրավար Ռովշան Թելմանօղլի Աքպերովի գործողութիւններուն, նախարարը ըսաւ. «Ես կ'ամչնամ, որ այդ մարդը զինուորական ուսադիր կը կրէ, նոյնիսկ եթէ իմ հակառակորդս է: Այսպիսի մարդ իրաւունք չունի այդ կոչումը կրելու, որ երկրի մէջ ալ ըլլայ: Ես ընդհանրապէս միշտ յարգանքով կը վերաբերիմ հակառակորդիս, ինծի բախտ վիճակուած է նաեւ պատիւով հակառակորդի հետ կոուիլ, ես հպարտութիւն կ'ապրիմ, որ իմ հակառակորդս այդպիսին է: Սակայն այս պարագային ես կ'ամչնամ, որ նման հակառակորդ ունիմ», նշեց Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարը:

«Յուլիսի վերջաւորութեան եւ Օգոստոսի սկիզբը սահմանին վրայ տիրող լարուած օրերուն հարիւրաւոր կամաւորներ բարձրացան դիրքեր մեր զինուորներուն կողքին գտնուելու եւ զանոնք ոգևորելու համար: Տարբեր պաշտօնատարներ ալ եղան դիրքերուն մէջ, ուրիշներ նոյնիսկ զիշերեցին հոն: Արդեօք անոր անհրաժեշտությունը կա՞ր եւ ի՞նչ տուաւ կամաւորներու այցելութիւնը մեր բանակին» «Երկիր»-ի հարցումին, Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար Սովսէտ Յակոբեան պատասխանեց. «Վերջին գործողութիւններուն ժամանակ մեր հասարակութիւնը համախմբուեցաւ, եւ ասիկա միայն եւ միայն հայ զինուորին շնորհիւ է: Եթէ հայ զինուորը ինքզինք առաջնային զիջին վրայ այդպէս չպահէր, հակառակորդին արժանի հարուած չտար, ես չեմ խորհիր, որ հասարակութիւնը կը համախմբուէր», ըսաւ նախարարը: Սովսէտ Յակոբեան նշեց, որ մեր բանակին միջոցները բաց, ազատ եղած են միայն 20 առ հարիւրով: Բանակին 40 առ հարիւրը եղած է զօրամասերուն մէջ, որովհետեւ անոր անհրաժեշտությունը չկար, նոյնիսկ առաջին զիջի զօրամասերը իրենց միջոցներուն կէտը չեն օգտագործած: «Բայց նաեւ կարելոր էր այն, որ այդ պահուն զինուորները առանձին չեն զգացած», ըսաւ ան եւ աւելցուց. «Ազատամարտիկը իր հին զինուորական տարագով յայտնուած էր մեր հայ զինուորի կողքին եւ ըսած, որ ինք եկած է տեսնելու, թէ զինուորը ինքզինք ինչպէ՛ս կը զգայ: Եւ ամէն տեղ այս ազատամարտիկները յայտնած են, որ իրենք սահմանագիծին վրայ ընելիք չունին, անոր կարիքը չկայ»: «Այդ օրերուն նոյնիսկ այսպիսի դրուագ մը եղած է. երբ զինուորին հայրը, որ ազատամարտիկ եղած է, եկած է իբրեւ կամաւոր, սակայն որդին տեսնելով հայրը, ետ ուղարկած է զայն՝ ըսելով, որ դուն ինչ որ պէտք է ժամանակին ըրած ես, հիմա մեր կարգն է»:

Նախարարը վստահեցուց, որ մեր բանակին ուժերը եւ միջոցները բաւարար են հակառակորդին ռոնձգութիւնները կանխելու եւ պատշաճ հակահարուած տալու համար, բայց այս պահուն բոլորը զինուորի կողքին պէտք է ըլլան: Անդրադառնալով պաշտօնատարներու պարբերական այցելութիւններուն՝ նախարարը նշեց, որ անոր անհրաժեշտությունն ալ կայ: «Այն քաղաքական գործիչը, որ կը քննադատէ բանակը, թող կրկին քննադատէ, բայց դժուար պահուն գայ եւ բանակին կողքին կանգնի», ըսաւ նախարարը:

Արամ Ա. Կաթողիկոս Պիքֆայայի Վանքը Մկրտեց Սուրբ Աստուածածնայ Վանք Անունով

Մեր 18 Օգոստոսի թիով մանրամասնօրէն հրատարակած էինք Սուրբ Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով մատուցուած Ս. պատարագին Ս. պատարագին լուրը, որուն ընթացքին Մեծի տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս Ս. Աստուածածնայ վանք անունով մկրտեց Պիքֆայայի վանքը:



Ստորեւ կը ներկայացնենք վանքին պատմականն ու զարգացման հանգրուանները: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սուրբ Աստուածածնայ վանքը, որ 62 տարիներէ ի վեր իբրեւ միաբանութեան հովուոցը կը ծառայէ, եւ ուր կը գտնուի նաեւ դպրեւանքը, վերջին հինգ տարիներու ծրագրուած շինարարական աշխատանքներուն շնորհիւ, այսօր կը ներկայանայ իբրեւ ամբողջական վանական համալիր՝ իր բոլոր յարմարութիւններով:

Սուրբ Աստուածածնայ վանքի համալիրին մաս կը կազմեն հետեւեալ կառոյցները.-

- 1.- Սուրբ Աստուածածին մատուռը, կառուցուած՝ 1952 թուականին, երջանկայիշատակ Գարեգին Ա. կաթողիկոսին օրով, Երուանդ Տեմիրճեանի բարերարութեամբ:
- 2.- Դպրեւանքի շէնքը, կառուցուած՝ 1983-1986 տարիներուն, երջանկայիշատակ Խորէն Ա. եւ Գարեգին Բ. կաթողիկոսներու օրերուն: Ընդառաջելով Արամ Ա. վեհափառ հայրապետին փափաքին՝ 2003 թուականին «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկը ստանձնեց շէնքին ամբողջական նորոգութեան ծախսերը:
- 3.- Հայոց ցեղասպանութեան յուշարձան, կանգնած՝ Ցեղասպանութեան 50-ամեակին առիթով, երջանկայիշատակ Խորէն Ա. կաթողիկոսի օրօք: Յուշարձանը եզերող բակի ընդարձակման ու բարեզարդման աշխատանքներուն բարերարութիւնը ստանձնած է Զուիցերիայէն տէր եւ տիկ. Ալէքքօ եւ Անի Պէզիկեան ամուլը:
- 4.- Վեհարանի շէնքը, կառուցուած՝ 1952 թուականին, երջանկայիշատակ Տ. Գարեգին Ա. կաթողիկոսի օրով: Վեհարանին շէնքը ամբողջական նորոգութեան ենթարկուեցաւ անցնող ամիսներուն ընթացքին, Արամ Ա. վեհափառ հայրապետին հսկողութեան ներքոյ: Նորոգութեան բարերարութիւնը ստանձնած է Դամասկոսէն տէր եւ տիկ. Գառնիկ եւ Անահիտ Եագուպեան ամուլը:
- 5.- Միաբանական շէնքը, կառուցուած՝ 2014 թուականին: Ընդառաջելով Արամ Ա. վեհափառ հայրապետի փափաքին՝ տէր եւ տիկ. Հրայր եւ Մակի Սողոմոնեան ամուլը, Տուպայէն, ստանձնեց 40 սենեակներ ունեցող շէնքին շինարարական բոլոր ծախսերը:



6.- Նահատակաց խորանը, կառուցուած՝ 2013 թուականին: Ընդառաջելով Արամ Ա. վեհափառ հայրապետի փափաքին՝ տէր եւ տիկ. Արթիւր եւ Թամար Նազարեան ամուլը, Լիբանանէն, ստանձնեց խորանին կառուցման բոլոր ծախսերը:

7.- Սուրբ Աստուածածին մատրան շրջափակը ընդարձակուեցաւ ու բարեգարդուեցաւ՝ լիբանանահայ Սարգիս, Աւետիս եւ Յակոբ Տեմիրճեան եղբայրներուն բարերարութեամբ:

8.- Ս. Աստուածածնայ վանքին մուտքի ընդլայնման ու հրապարակի բարեգարդման աշխատանքները կը շարունակուին: Այս ծրագրին բարերարութիւնը ստանձնած է Թեհրանէն Հէնօ Տէր Ղուկասեան:

Սուրբ Աստուածածնայ վանքին մէջ շուտով պիտի սկսին միաբանական դամբարանի կառուցման աշխատանքները: Վանքը նաեւ օժտուեցաւ երեք մեծ ջրամբարներով: Սուրբ Աստուածածնայ վանքի շրջափակի բարեգարդման ու Հայոց ցեղասպանութեան նուիրուած հրապարակի շինարարական աշխատանքները կը շարունակուին եւ իրենց աւարտին պիտի հասնին յառաջիկայ տարի:

Բերիոյ Հայոց Թեմի Ուսումնական Խորհուրդի «Մեսրոպ Մաշտոց» Մանկապատանեկան Երգչախումբը Վերսկսաւ Իր Գործունէութիւնը, Խմբավարութեամբ՝ Գայեանէ Սիմոնեան-Տէրեանի

Չորեքշաբթի, 20 Օգոստոս 2014-ին, Բերիոյ Հայոց Թեմի Ուսումնական խորհուրդի «Մեսրոպ Մաշտոց» մանկապատանեկան երգչախումբը նոր ոգի ու շունչ պարգեւեց հալէպահայ պատանի-պարմանուհիներուն, վերսկսելով իր տարեկան համերգի յատուկ փորձերը, երկու տարուայ ընդմիջումէ ետք Հալէպի Ազգ. Կիւլպէնկեան վարժարանէն ներս:



Բերիոյ Հայոց Թեմի «Մեսրոպ Մաշտոց» երգչախումբը հիմնուած է 1973-ին, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Սուրէն Արք.Գաթարոյեանի հովանաւորութեամբ, Ուսումնական Խորհուրդի կազմակերպութեամբ, եւ գեղարուեստական ղեկավարութեամբ խմբավար, ներկայիս լուսահոգի Պօղոս Ապաճեանի՝ 15 տարիներու տւեղողութեամբ: Մէկ տարի խումբը ղեկավարած է Կոմիտաս սրբազանը, մէկ տարի՝ պարոն Գեորգ Պէպէճեանը:

1991-2012 խումբը ղեկավարած է Գայեանէ Սիմոնեան-Տէրեան, որ յատուկ երանգ ու շունչ տուած է երգչախումբին:

Բերիոյ Հայոց Թեմի Ուսումնական խորհուրդը, շրջանցելով բոլոր դժուարութիւնները, որոշեց վերսկսիլ «Մեսրոպ Մաշտոց»-ի յոյժ կարեւոր աշխատանքը:

Գայեանէ Սիմոնեան-Տէրեան հայրենի այն խմբաւորուհին եղաւ, որ հակառակ Սուրիոյ տագնապին ու անապահով վիճակին վերադարձաւ Հալէպ ու վերստանձնեց երգչախումբի գեղարուեստական ղեկավարութիւնը: Բարի Երթ «Մեսրոպ Մաշտոց»-ին:

Քոնկրետական Քլարք Կը Սատարէ Արցախի Ժողովուրդին Եւ Կը Դատապարտէ Հայ Ժողովուրդին Դէմ Ագրպէյճանի Յարձակումը

«Արմէնփրես» կը հաղորդէ, որ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տան մէջ Մասաչուսեցի 5-րդ վարչական շրջանը ներկայացնող քոնկրետական Քլարքին Քլարք Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի դէմ Ագրպէյճանի կատարած յարձակումին դէմ յայտարարութիւն հրապարակած է:

«Ես խորապէս մտահոգուած եմ վերջերս Ագրպէյճանի՝ ընդդէմ Լեռնային Ղարաբաղի շղթայագերծած զինուորական յարձակումի, ինչպէս նաեւ Հայաստանի քաղաքային անձերու եւ Միջազգային կարմիր խաչի դէմ արձակագէններու գնդակոծութիւններուն մասին հրապարակումներով: Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը չափազանց երկար ապրած է ագրպէյճանական յարձակումի մնայուն սպառնալիքին տակ: Բռնարարքներու այս արշաւը կը խախտէ զինադադարը եւ միայն պիտի յանգեցնէ նորանոր մարդկային կորուստներու: Հակառակ բոլոր դժուարութիւններուն, Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը կրցած է ստեղծել կենսունակ ժողովրդավար հասարակութիւն, եւ ես կը սատարեմ անոնց՝ Ագրպէյճանի յարձակումը դատապարտելու գործին մէջ», յայտարարած է քոնկրետականը:

Յիշեցնենք, որ Ագրպէյճանի զինուորական գործողութիւնները դատապարտող յայտարարութիւններ կատարած էին նաեւ քոնկրետականներ Էտըմ Շիֆ, Պրետ Շըրմըն, Տէվիտ Միսլին, Ճուտի Չու եւ Ներկայացուցիչներու տան արտաքին յարաբերութիւններու յանձնախումբի նախագահ Էտ Ռոյս: Վերջինս ընդգծած էր, որ Լեռնային Ղարաբաղի ապագան պէտք է որոշէ Արցախի ժողովուրդը՝ հանրաքուէի միջոցով:

Ճոն Հեֆրն. «Ղարաբաղեան Տագնապը Զինուորական Լուծում Չունի»

«Այս տագնապը զինուորական լուծում չունի: Կոչ կ'ուղղենք երկու կողմերուն սկսելու լուրջ բանակցութիւններու», յայտարարեց Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ճոն Հեֆրն Չորեքշաբթի օր իր հրապարակած տեսագրուած խօսքին մէջ՝ նուիրուած դարաբաղեան խնդիրին:

«Կրկին կը յայտնենք մեր ցուակցութիւնը վերջին միջադէպերուն ընթացքին զոհուածներու ընտանիքներուն եւ վիրաւորներուն», այսպէս կը սկսի դեսպանը իր հայերէն ուղերձը:

Յիշեցնելով ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի ամերիկացի համանախագահ Ճէյմս Ուորլիքի վերջերս կատարած յայտարարութիւնը, որ դարաբաղեան տագնապը «այլեւս սառեցուած չէ», Հեֆրն կը շարունակէ. «Ե՛ւ այստեղ, ե՛ւ Պաքուի մէջ մենք կոչ կ'ուղղենք բոլորին՝ ձեռնարկելու անհրաժեշտ քայլերու լարուածութեան նուազեցման եւ զինադադարը յարգելու համար: Սպառնալիքները եւ կարծի հոետորաբանութիւնը գործին չեն օգներ: Հաշուեյարդարը եւ հետագայ բռնութիւնները աւելի կը դժուարացնեն խաղաղ լուծում գտնելու ճամբան»:

«Զոհերու յիշատակը յարգելու լաւագոյն միջոցն է դադրեցնել բախումները ճիշդ հիմա», կը շեշտէ Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանը:

Միս կողմէ, դեսպան ճոն Հեֆըրն Չորեքշաբթի օր տեսակցեցաւ Հայաստանի եզիտի համայնքի շարք մը ներկայացուցիչներու հետ՝ քննարկելու համար Իրաքի եզիտիներու ներկայ կացութիւնը եւ Միացեալ Նահանգներու գործողութիւնները այնտեղ: Դեսպան Հեֆըրն շեշտեց Միացեալ Նահանգներու կառավարութեան շարունակական մարդասիրական ջանքերը՝ մեղմացնելու Իրաքի եզիտիներու ծանր կացութիւնը եւ անոնց բարօրութիւնը ապահովելու յանձնառութիւնը:

Սահմանամերձ Գիւղերու Բնակիչներուն Համար Պաշտպանութեան Դասընթացք

Յառաջիկային Հայաստանի սահմանամերձ գիւղերու բնակիչներուն համար պիտի կազմակերպուին պաշտպանութեան յատուկ դասընթացքներ, որոնց ընթացքին գիւղացիներուն պիտի տրվեցնեն, թէ ի՛նչ պէտք է ընել, օրինակ, կրակոցներու ժամանակ: Նախաձեռնութիւնը արտակարգ իրավիճակներու նախարարութեանն է:

Նախարար Արմէն Երիցեան «Ազատութիւն» ձայնասփիւղի կայանին հետ զրոյցին ընթացքին ըսաւ, որ սահմանային վերջին միջադէպերէն ետք, նման դասընթացքներ կազմակերպելու առաջարկ ներկայացուցած է պաշտպանութեան նախարարին, եւ այժմ երկու նախարարութիւնները այս ուղղութեամբ պիտի համագործակցին:

«Հիմա նկուղները պէտք է երթանք, նայինք, այսինքն՝ այդ կրակոցներուն ընթացքին իրենք ի՛նչ պէտք է ընեն: Շատերը երկար ժամանակ կրակոցներու տակ են, բայց հոն կան մասնագէտներ, մասնագէտները կ'երթան հոն, ցոյց կու տան, մենք ալ կ'երթանք: Պէտք է երթանք մարդոց օգնենք», ըսաւ Երիցեան:

Ան նաեւ նշեց, որ այս աշխատանքին պիտի մասնակցի արտակարգ իրավիճակներու նախարարութեան 4 հազար աշխատակից: Ըստ անոր, պաշտպանութեան նախարար Սէրան Օհանեան արդէն յանձնարարականներ տուած է: Սահմանային 21 գիւղի մէջ ծրագիրները շուտով կը սկսին:

Արտակարգ իրավիճակներու նախարարը ընդգծեց, որ ուշադրութիւն պիտի դարձնեն նաեւ քաղաքացիական բնակչութեան կողմէ անզգուշութեան, անտեղեկութեան պատճառով սահմանը խախտելու դէպքերուն, պիտի քարտէսագրեն սահմանային տարածքները եւ գիւղացիներուն պիտի բացատրեն, թէ ո՞ր շրջաններէն կարելի չէ երթալ:

«Մենք պէտք է իրենց բացատրենք, դասընթացքներ կազմակերպենք, որ այս տեղերը կարելի է երթալ, այս տեղերը՝ ոչ: Քարտէսները կ'ունենանք, իրենց ցոյց կու տանք», ըսաւ Երիցեան եւ աւելցուց. «Հակառակ անոր որ խնդիրը բանակի իրաւասութեան մէջն է, բայց այս ձեւով մենք պիտի փորձենք օգնել պաշտպանութեան նախարարութեան»:

Նախանցեալ օր համագործակցութեան համաձայնութիւն գոյացուցին նաեւ արտակարգ իրավիճակներու նախարարութիւնն ու Երկրապահ կամաւորականներու միութիւնը: Յառաջիկային երկրապահները նախարարութեան աշխատակիցներուն համար դասընթացքներ պիտի կազմակերպեն:

www.yerakouyn.com

ԱՆԴԱՆԱԴՐՁ

Տարածաշրջանային Խնդիրներ Եւ Հայկական Արձագանգներ

Տարածաշրջանային զարգացումները այլևս ոչ միայն հեռակա պատկերներով, այլ ուղղակի անմիջական կ'ընդգծեն Միջին Արևելքի ապաքրիստոնեացման միտումները: Բայց խնդիրը միայն կրօնական հողի վրայ ուղղակի բռնութեամբ թէ խուճապի մթնոլորտի ստեղծմամբ կամ նոյնիսկ ծրագրաւորուած բնակչային տեղաշարժերու համապատասխան դրութիւններ ընծայելով զարգացող երեւոյթ չէ:

Եզիտիներու նկատմամբ կիրարկուած ջարդն ու տեղահանութիւնը արդէն ոչ միայն ապաքրիստոնեացման մասին կը խօսին, այլ նաեւ ընդհանրապէս շրջաններու ամայացման եւ ռազմավարական նշանակութիւն ունեցող գօտիներու վրայ միատարր ու միահեծան վերահսկողութեան:

Ռազմավարական կէտերը այս պարագային միայն ուժանիւթին, քարիւղին, ջրային պաշարներուն եւ նման կարելորութիւն ներկայացնող դիրքերու կը վերաբերին: Ծայրայեղ իսլամականներու թիրախաւորած շրջանները, այլ տարածքներու պարագային առանց դիմադրութեան յանձնելը, եւ մանաւանդ միջազգային ընտանիքի լուռ ու կրաւորական պահուածքը մտածել կու տան, որ հետապնդուածը ոչ թէ իսլամական պետութեան ստեղծումն է, այլ աւելի քարիւղի պետութեան: Ուժանիւթը հիմնական շարժառիթը ըլլալով նման զարգացումներու, կը թուի, որ ընդհանրապէս տարածաշրջանին մէջ բաժանարարութեամբ նոր վերահսկելիութիւն մը յառաջացնելու միտող զարգացումներ են այն, ինչ որ վայրագ, անմարդկային, եթէ ոչ անասնային եղանակներով ի գործ կը դրուի թիրախաւորուած տարածքներու վրայ ապրող ազգաբնակչութիւններուն նկատմամբ:

Միացեալ Նահանգներու գերքաղաքականացուած դիրքորոշումը կիրարկուող ջարդերուն եւ տեղահանութիւններուն ի տես բարացուցական է եւ պարզապէս կ'ընդգծէ նման վարկածներու իրականալիութիւնը: Օդային շատ սահմանափակ հրթիռակոծումներ այն սահմաններուն վրայ, որոնցմէ այն կողմ կը գտնուին ամերիկեան ռազմակէտեր կամ գօտիներ, այդ մտածումը կ'ամրապնդեն: Այդ սահմաններէն անդին պատահածները ոչ միայն հակադարձումի չեն արժանանար, այլ նաեւ գուցէ առաջադրելի են: Մնացեալը, թէ՛ իսլամական պետութիւնը սպառնալիք է աշխարհին եւ նման յանկերգումներ, աւելի ներկայացումի բնոյթ ունին:

Տեղեկատուականը այս բոլորի լուսաբանման առումով կարծես մաս կը կազմէ ընդհանուր ծրագիրին: Գլխատուած երեխաներ, ողջ թաղուածներ, չարչարանքի ենթարկուողներ, հակաքրիստոնեական բարբարոս *աքթեր*, այս բոլորը կը ծառայեն խուճապահար ընելու այնտեղ ապրող կամ այնտեղէն մեկնած հասարակութիւնները, միանգամընդմիջտ համոզիչ դարձնելու համար, որ նման արարածներու հետ համագոյակցիլը ուղղակի անհամատեղելի է: Խուճապահարութեան այս քաղաքականութիւնը կը միտի ռազմավարական կարելորութիւն ներկայացնող տարածքներու ամայացման, ժողովրդագրական հիմնական փոփոխութիւններու եւ նոր գօտիներու ստեղծման:

Ընդհանուր այս թռուրտին մէջ պահ մը յաւելեալ լուսարձակներ պէտք է կեդրոնացնել Իրաքի եզիտիներուն ապրած ողբերգութեան վրայ: Տեղային ամբողջական գտումի այս երեւոյթը կը կատարուի օր ցերեկով, աշխարհի աչքին առջեւ: Պաշտօնական դատապարտանքն ու մանաւանդ կանխարգիլման գործողութիւններ ոչ թէ տեղի չեն ունենար, այլ նոյնիսկ նման պահանջներ չեն արժարձուիր: Առաւելագոյնը կիսապաշտօնական մարդասիրական կոչերն են,

որոնք կը հնչեն՝ պարագայականութեան տպաւորութիւնը ձգելով դիպաշարին հետեւողներուն վրայ:

Հայկական կողմը, պաշտօնական թէ հասարակական առումներով, իւրայատուկ արձագանգումի պատճառներ ունի: Նախ անշուշտ այն պատճառով, որ Հայաստանի Հանրապետութեան մէջ կ'ապրի եզիտի ազգաբնակչութիւնը, եւ իբրեւ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներ իրաւունքը ունին իրենց ազգակիցներուն ճակատագիրով իրենց պետութենէն համապատասխան քայլեր ակնկալելու:

Եւ անշուշտ հիմնական պատճառով, որ թէեւ տարբեր տարողութիւններով, սակայն այն, ինչ կը պատահի այսօր՝ բռնութիւն, տեղահանութիւն եւ ջարդ, բաւականաչափ ծանօթ է հայ ժողովուրդին՝ իբրեւ ազգային գտումի անմարդկային եղանակ:

Պաշտօնական Երեւանը նախագահի մամլոյ բանբերին ճամբով պարզ դարձուց իր դիրքորոշումը: Ազգային փոքրամասնութիւններուն եւ այս պարագային յատկապէս եզիտի ազգաբնակչութեան դէմ կ'իրարկուող բռնութիւնը անընդունելի է եւ մերժելի: Երեւանը միջազգային ընտանիքին կոչ կ'ուղղէ անյապաղ քայլերու ձեռնարկելու այդ բռնութիւնները կասեցնելու եւ տուժածներուն մարդասիրական օգնութիւն տրամադրելու: Հայաստանի Հանրապետութեան նախագահը յանձնարարած էր նաեւ տրամադրուած օժանդակութեան ծրագիրները ընդլայնելու:

Այլ ուղղութիւններ շօշափած էր Արցախի նախագահի մամլոյ բանբերին յայտարարութիւնը: Անընդունելի նկատելով պատահարները՝ Դաւիթ Բաբայեանը կը նշէր, որ եզիտիներն ու հայերը բախտակից ժողովուրդներ են եւ թէ աւելին՝ եզիտիներ մասնակցած են արցախեան ազատամարտին: Ըստ Արցախի մամլոյ բանբերին, իրենք պատրաստ են նաեւ կեցութեան եւ համապատասխան կենցաղային դիւրութիւններու ընձեռման կարելիութիւնները քննարկել, եթէ նման դիմումներ ըլլան:

Թէեւ նուրբ եւ զուսպ ըսուած, այսուհանդերձ այստեղ է կարելոր առաջադրանքը: Ժողովրդագրական պատկերի լուրջ խնդիր դիմագրաւող մեր հայրենիքը Միջին Արեւելքէն տարբեր ազգաբնակչութիւններու արտահոսքի միտումները նկատելով պիտի պատրաստէ ենթահողը մնայուն կեցութիւն ապահովելու: Մարդասիրական բնոյթի կատարուած քայլերն ու ճգնաժամերու հետեւանքով յառաջացած գաղթականութեան հաւաքական կացարաններ տրամադրելը օրինաչափ է, որ ստանան միջազգային կառոյցներու օժանդակութիւնները: Մինչ այդ հայկական կողմի, թէ՛ Հայաստանի Հանրապետութեան եւ թէ՛ Արցախի դատապարտանքը, միջազգային հանրութեան ուղղուած կոչը եւ օժանդակութիւն ու կեցութիւն տրամադրելու պատրաստակամութիւնը չափի մէջ, բոլոր հանգամանքները նկատի առնելով կատարուած են:

Այս օրերուն անտեղի չ'ըլլար յիշեցնելը, թէ այս ջարդերն ու տեղահանութիւնները գործադրողները ո՞ր պետութենէն ֆինանսաւորուեցան, ո՞ր սահմաններէն մտան խնդրոյ առարկայ տարածքները եւ ո՞վ զինեց զանոնք: Կամ վերստին ընդգծելը, թէ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումն ու դատապարտանքը կրնային կանխարգելիչ դեր ունենալ միեւնոյն եղանակի ու ոճի կրկնութեան:

«Ա.»

www.aztarar.com

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԿԻՎ. «Թուրքիոյ Յաջորդ Վարչապետը Պիտի Ըլլայ Տաւութօղլուն»



Թրքական «Հիւրիլէթ» օրաթերթին կայքը կը հաղորդէ, որ Թուրքիոյ գործող նախագահ Ապտիլլա Կիլի նստավայրին մէջ տեղի ունեցած հրաժեշտի ընդունելութեան ընթացքին Կիւլ յայտարարած է, որ Ռեճեփ Թայիփ Էրտողանի նախագահ ընտրուելէն ետք Թուրքիոյ վարչապետի պաշտօնը պիտի վարէ արտաքին գործոց նախարար Ահմեթ Տաւութօղլուն:

Կիւլ նախագահի լիազօրութիւնները Էրտողանին պիտի փոխանցէ 28 Օգոստոսին:

«Ինչպէս կը տեսնեմ՝ վարչապետի պաշտօնը պիտի անցնի Ահմեթ Տաւութօղլուին: Ես զինք քաղաքականութեան մէջ ներգրաւեցի: Մենք անոր պիտի աջակցինք», ըսած է Կիւլ:

Թուրքիոյ՝ տակաւին գործող նախագահը նշած է, որ 28 Օգոստոսէն ետք փափաք չունի Անգարայի մէջ մնալու եւ պիտի վերադառնայ Պոլիս:

27 Օգոստոսին, Թուրքիոյ իշխող Արդարութիւն եւ բարգաւաճում կուսակցութիւնը համագումարի ընթացքին պիտի ընտրէ նաեւ կուսակցութեան նոր ղեկավար:

Պոլսոյ հայոց պատրիարքութեան ֆէյսպուքեան էջը կը հաղորդէ, որ պատրիարքութեան ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթեշեան, Շիրվան քհնյ. Միւրզեանի ընկերակցութեամբ Չանքայա նախագահական պալատին մէջ մասնակցած է Կիւլի սարքած հրաժեշտի ընդունելութեան:

Աթեշեան սրբազանը այս առիթով յաջողութիւն մաղթած է Կիւլին իր հետագայ պաշտօններուն մէջ:

«Արմէնփրես»՝ վկայակոչելով թրքական լրատուամիջոցները, կը հաղորդէ, որ Թուրքիոյ նախագահի երդման արարողութեան պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով հրաւիրուած են այլ պետութիւններու ղեկավարներ, որոնց շարքին են Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամա եւ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին: Անոնք հաւանաբար այդ արարողութեան ուղարկեն իրենց ներկայացուցիչները:



Կ'ենթադրուի, որ Էրտողանի երդման արարողութեան պիտի մասնակցին թրքախօս պետութիւններու, Քաթարի եւ Արաբական ծոցի երկիրներու ղեկավարները:

ՏԱՀԵՇ Կը Գլխատէ Առեւանգուած Ամերիկացի Լրագրող Սը

Երեքշաբթի, 19 Օգոստոսին, ահաբեկչական ՏԱՀԵՇ խմբաւորումը հրապարակեց տեսերիզ մը, որուն մէջ կ'երեւի 2 տարի առաջ Սուրիոյ մէջ առեւանգուածամերիկացի լրագրող Ճէյմս Ֆոլին: Իսլամական կայքերուն վրայ հրապարակուած «Նամակ Ամերիկային» վերնագիրով տեսերիզին մէջ կը յայտնուի ՏԱՀԵՇ-ի զինեալ մը, որուն կողքին կ'երեւի ամերիկացի լրագրողը: Տեսերիզին մէջ Ֆոլի կը դատապարտէ Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպաման` ըսելով, որ ան պիտի ըլլայ իր մահուան պատճառը, որովհետեւ որոշած է հարուածել Իրաքը: Ֆոլիի խօսքէն ետք կը ցուցադրուի անոր սպանութիւնը` գլխատումով:



Իսրայէլ Կը Շարունակէ Կազայի Դէմ Յարձակումը

Իսրայէլ Չորեքշաբթի օր շարունակեց Կազայի դէմ իր յարձակումը, որուն զոհ զացողներուն շարքին էր Քասսամի փաղանգներու հրամանատար Մոհամետ Տէյֆի կինն ու զուակը:



Իսրայէլեան քաղաքական աղբիւր մը իսրայէլեան «Ուալախ» կայքին հաղորդեց, որ Իսրայէլ Չորեքշաբթի օր արշալոյսին փորձած է ահաբեկել Տէյֆը, իսկ Իսրայէլի ներքին գործոց նախարար Կիտլոն Սահեր արդարացուց այդ փորձը` Քասսամի փաղանգներու հրամանատարը նկատելով «օրինական թիրախ մը», որուն «մաքրագործման» համար որեւէ առիթ պէտք է օգտագործուի:

Համասի ղեկավարներէն Մուսա Ապու Մարգուք յայտարարեց, որ Իսրայէլ Կազայէն հրթիռարձակման մասին սուտ յայտարարութիւն կատարած է, որմէ ետք մահափորձը կատարելու համար շարք մը միջոցառումներ որդեգրած է: Ապու Մարգուք չնշեց, եթէ Քասսամի փաղանգներու հրամանատարը այդ պահուն տան մէջ կը գտնուէր:

Իսրայէլեան օդուծը հարուածեց Պէյթ Լահիան, Մահազի գաղթակայանը, Խան Եունէսը, Ռաֆահը, Ժըհր Տիքը եւ բազմաթիւ տունէր քանդեց: Պաղեստինեան դիմադրութիւնը իր կարգին հրթիռակոծեց իսրայէլեան բնակեցման վայրերը, ինչպէս նաեւ Թել Աւիւը, Երուսաղէմը եւ Պեն Կորիոն օդակայանը:

ԼՈՒՐԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԷՆ

Սպահանի Պետական Համալսարանի Տնօրէնին Այցելութիւնը՝ Ազգային Առաջնորդարան



Օգոստոս 3-ին, Ս. Ամենափրկչեան վանք այցելեց Սպահանի պետական համալսարանի ընդհանուր տնօրէն դոկտ. Թալէպի՝ ընկերակցութեամբ համալսարանի օտար լեզուներու բաժանմունքի, հայագիտական բաժնի եւ միջազգային յարաբերութիւններու գրասենեակի տնօրէններուն:

Հանդիպումի ընթացքին դոկտ.

Թալէպի անդրադարձաւ հայ համայնքին եւ պետական համալսարանին միջեւ սերտ կապին ու համագործակցութեան, հաստատելով, որ հայագիտական ամպիոնը ստեղծուած էր հայ համայնքի նիւթական օժանդակութեամբ: Ան նաեւ խօսեցաւ համալսարանի յառաջիկայ ծրագիրներուն մասին աւելցնելով, որ Երեւանի պետական համալսարանին հետ կը փոխանակեն ուսանողներ եւ դասախօսներ, եւ յոյս յայտնեց, որ այդ յարաբերութիւնները աւելի ընդլայնին:

Սպահանի հայոց թեմի առաջնորդ Բաբգէն եպս. Չարեան անդրադարձաւ Ազգային առաջնորդարանի եւ Սպահանի պետական համալսարանի վաղեմութիւն ունեցող գործակցութեան եւ իր պատրաստակամութիւնը յայտնեց այսուհետեւ եւս շարունակելու նոյն ձեւով, յատկապէս՝ Երեւանի եւ Սպահանի պետական համալսարաններուն միջեւ ստեղծուած կապը հզօրացնելու եւ զարգացնելու ուղղութեամբ, որ կը նպաստէ երկու երկիրներուն միջեւ բարեկամական յարաբերութիւններու զարգացման ու ընդլայնման: Սրբազանը նաեւ բարձր գնահատեց ուսման ոլորտին մէջ համալսարանին գործունէութիւնը:

Բաբգէն եպս. Չարեան անդրադարձաւ շայն ցեղասպանութեան 100-ամեակին՝ նշեց, որ 2015-ին այս առիթով կարելոր դերակատարութիւն վերապահուած է Հայ դատը ծանօթացնելու ամբողջ աշխարհին եւ ասոր համար Յեղասպանութեան հարցը գիտական մակարդակով ներկայացնելու համար կարիքը կայ համալսարաններու համագործակցութեան:

Հանդիպումի ընթացքին ելոյթ ունեցան նաեւ օտար լեզուներու եւ միջազգային յարաբերութիւններու կապի գրասենեակի տնօրէնները, որոնք շեշտեցին Սպահանի պետական համալսարանին եւ առաջնորդարանին համագործակցութեան կարելորութիւնը:

WWW.AZTAGDAILY.COM

Թաւրիզի Քաղաքապետարանի Բարձրաստիճան Պատասխանատուներու Այցելութիւնը Ազգային Առաջնորդարան



Երկուշաբթի, 11 Օգոստոսին, Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Գրիգոր եպս. Չիֆթճեան Ազգային առաջնորդարանի «Էմիլ Յակոբեան» դահլիճին մէջ ընդունեց Թաւրիզի քաղաքապետարանէն բարձրաստիճան պատուիրակութիւն մը՝ ընկերակցութեամբ փոքրամասնութիւններու գրասենեակի պատասխանատուին: Սրբազան հօր կողքին, սոյն հանդիպման ներկայ գտնուեցան Ազգային վարչութեան անդամները՝ լրիւ կազմով:

Թաւրիզի քաղաքապետարանէն սրբազան հօր հրաւերով յատկապէս եկած էին 3-րդ քաղաքամասի պատասխանատու Աքպարի, ապահովական բաժնի պետ Ֆէյզի եւ քաղաքաշինութեան բաժնի պետ Ապպասի՝ միասնաբար քննարկելու Ազգային առաջնորդարանին կողմէ կատարուելիք շինարարական շարք մը ծրագիրներու վերջնական փուլը, անոնց լրացուցիչ պայմաններուն, հարկային հաշիւներուն, հրիտակուած կալուածի պայմաններուն հետ առնչուող խնդիրներուն եւ այլ մանրամասնութիւններու յստակացման ի խնդիր:

«Ամբողջ Ատրպատականի եւ յատկապէս Թաւրիզ քաղաքին մէջ, իր շինարար ներկայութեամբ ծանօթ է հայ ժողովուրդը: Նոյն շինարար ոգիի դրսևւորումն է այն ծրագիրը, որ այսօր ձեզի կը ներկայացուի մեր կողմէ: Այս քաղաքի բարեգարդման եւ ժողովուրդի կեանքին բարօրութեան առումով գնահատելի մեր նախաձեռնութեան յաջողութեան համար կարիքը ունինք ձեր աջակցութեան: Գործերու կանոնաւոր ու հեզասահ ընթացքին մէջ մեծ է դերը Թաւրիզի քաղաքապետութեան», ողջունելով հիւրերը՝ ըսաւ առաջնորդ սրբազանը, աւելցնելով, թէ նման աշխատանքներու ձգձգումը կը թուլցնէ ուժերը եւ կը տկարացնէ ընդհանրապէս կառուցողական աշխատանքը:

3-րդ քաղաքամասի պետ Աքպարի պատասխանելով սրբազան հօր ողջոյնի խօսքին՝ յատկապէս անդրադարձաւ Ատրպատականի հայոց թեմի աշխոյժ գործունէութեան եւ ընդհանրապէս իրանահայ համայնքի շինարար ոգիին: Ապա Ազգային վարչութեան ատենապետ Ռուբիկ Ճանանեանի եւ անդամներուն՝ տոքթ. Աշոտ Խզրիեանի, Անի Յակոբեանի, Վարդան Աբրահամեանի եւ Գագիկ Ճորճեանի կողմէ մանրամասնօրէն ներկայացուեցան շինարարական ծրագիրները, որոնք երկար տարիներու ուսումնասիրութեան արդիւնք էին:

Աշխատանքային սոյն հանդիպումը եզրակացնելով՝ կողմերը ժամկետ ճշդեցին քաղաքապետարանին կողմէ պահանջուած օրինական բոլոր գրանցումները եւ կանոնական չափագրումները ամբողջացնելու համար, որուն աւարտին շինարարական աշխատանքները կը սկսին՝ Իմամիէի շրջանին մէջ թեմին սեփականութիւնը եղող հողատարածքին վրայ վաճառաշահ կեդրոնի կառուցման ծրագիրը իրականացնելու հեռանկարով:

«Փոքրիկ Երեւանցիներ»-ը Ալեքսանտրուպոլիս Այցելեցին



Յուլիս 18-ին, Ալեքսանտրուպոլիս այցելեցին Հայաստանէն եկած «Փոքրիկ երեւանցիներ»-ու երգի եւ պարի համոյթը՝ ղեկավարութեամբ Գեղամ եւ Նոնա Մանուկեաններու:

Համազգայինի ատենապետ Արա Վարդանեան դիմաւորեց հիւրերը եւ քաղաքապետարանին կողմէ յատկացուած սրահին մէջ կազմակերպուեցաւ նախաճաշ. երգի եւ պարի համոյթի անդամներուն կ'ընկերակցէին նաեւ «Տարօնեան» միօրեայ վարժարանին սաները:

Այնուհետեւ անոնք այցելեցին Սուրբ Նիկոլաոս եկեղեցոյ թանգարանը Ալեքսանտրուպոլիսի կեդրոնական հրապարակ, ուր ծանօթացան քաղաքի տեսարժան վայրերուն, ուղղուեցան նաւահանգիստ, քաղաքային լողափ, ապա Սուրբ Կարապետ եկեղեցոյ սրահին մէջ մատուցուեցաւ ճաշ:

Երեկոյեան Ալեքսանտրուպոլիսի եկեղեցոյ բակին մէջ ելոյթ ունեցան «Փոքրիկ երեւանցիներ»-ը:

Աւարտին շնորհակալական խօսքով ելոյթ ունեցաւ Արա Վարդանեան:

Դոկտ. Թամար Քաթարոյեան Մոնրովիոյ «Մէֆլաուրը» Նախակրթարանի Տնօրէնուհի



25 յունիս 2014-ին Մոնրովիոյ հանրային վարժարաններու Ուսումնական խորհուրդը դոկտ. Թամար Քաթարոյեանը նշանակեց Մոնրովիոյ «Մէֆլաուրը» նախակրթարանի տնօրէնուհի: Օգոստոս 4-ին ան ստանձնելով իր պաշտօնը՝ սկսաւ աշխատանքի:

Դոկտ Քաթարոյեան ծնած է Ֆրեզնօ, անդամակցած է ՀՄԸՄ-ի եւ ՀԵԴ-ի: Քալիֆորնիոյ Ըրվայն համալսարանին մէջ մասնագիտացած է տնտեսագիտութեան եւ ընկերաբանութեան ճիւղերուն մէջ:

Ուսուցչական եւ վարչական ասպարեզներուն առընթեր, կրթական մարզէն ներս շարունակելով իր ուսումը, ան ստացած է մագիստրոսի իր աստիճանը, իսկ մայիս 2013-ին «ԵՈՒ. Էս. Սի» համալսարանէն՝ դոկտորայի աստիճանը:

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

**Տիանա Արգար
Աշխարհի Առաջին Կին Դեսպանը**



Թէեւ աշխարհի առաջին կին դեսպան համարուած է Ալեքսանտրա Քոլոնտան, որ 1923-1952 թուականներուն Խորհրդային Միութեան դեսպանի պաշտօն վարած է յաջորդաբար Նորվեկիոյ, Մեքսիքայի եւ Շուէտի մէջ, սակայն իրականութիւնը տարբեր է: Գրող, հրապարակախօս, հասարակական գործիչ Տիանա Արգարը Հայաստանի Ա. Հանրապետութեան դեսպան նշանակուած է Ճափոնի եւ Ծայրագոյն Արեւելքի մէջ 1925-ին, այսինքն՝ Ալեքսանտրա Քոլոնտայէն 3 տարի առաջ:

Ո՞վ է Տիանա Արգար

Տիանայի բունը անունը Անահիտ է. անոր նախնիները նորջուղայեցիներ էին: Մայրը եղած է հանրայայտ հնդկահայ վաճառական, գրող, թարգմանիչ: Հետագային անոր ընտանիքը տեղափոխուած է Հնդկաստանի Կալկաթա քաղաքը, ուր ան անգլիական կրթութիւն ստացած է:

1890-ին Արգար ամուսնացած է ծնունդով նորջուղայեցի Միքայէլ Արգարեանի հետ: Ամուսնութիւնը տեղի ունեցած է Չինաստան, ուրկէ մեկնած են Ճափոն եւ հոն ալ հաստատուած են: Հոն Միքայէլը մետաքսի վաճառականութեամբ զբաղած է եւ հիմնած՝ «Կրէյթ Իսթըրն» պանդոկը:

1906-ին ամուսինին անակնկալ մահէն ետք Տիանան իր զաւակներուն հետ տեղափոխուած է Եոքոհամա, ուր բացած է մեծ վաճառատուն եւ առետուրը շարունակած՝ Չինաստանի, Ա. Մ. Նահանգներու եւ Եւրոպայի հետ: Եոքոհամայի մէջ Տիանան նաեւ գնած է շքեղ առանձնատուն մը, որուն դռները միշտ բաց եղած են օտար բարձրաստիճան անձնաւորութիւններուն եւ հայ գաղթականներուն առջեւ:

Հրապարակախօս Եւ Գրագէտ

Ա. Համաշխարհային պատերազմի նախօրեակին Տիանան ելոյթ ունեցած է հայ ժողովուրդին նուիրուած դասախօսութիւններով, յօդուածներով եւ աշխատակցած է Եոքոհամայի «Տը Ճափան Կազէթ» թերթին:

Տիանա Արգարի (անգլերէն գրուած) գործերէն են՝ «Ճշմարտութիւնը հայութեան ջարդերու մասին» (1910) «Հայկական հարցը», «Դաւաճանուած Հայաստան» (1912), «Իր անունով» (1911), «Եւրոպայի խաղաղութիւնը», «Խաղաղութեան հարցը» (1912):

Տիանա ընդառաջելով «Թայմզ», «Ֆիկարօ» եւ այլ թերթերու դիմումներուն՝ յօդուածներ գրած է Արեւելքի երկիրներու տնտեսութեան մասին:

Բացի հայերենն եւ անգլերենն՝ Տիանան տիրապետած էր նաեւ հնդկերենին, ճափոներենին եւ չինարենին:

Լիազօր Դեսպան

1920 յուլիս 2-ին Տիանա Արգար նշանակուեցաւ Հայաստանի Ա. Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցիչ եւ գլխաւոր հիւպատոս՝ ծայրագոյն Արեւելքի, Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Ճափոնի մէջ:

Պահպանած է Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Համօ Օհանջանեանին նամակը՝ ուղղուած Տիանա Արգարին: Նամակին մէջ Օհանջանեան շնորհակալութիւն կը յայտնէ Արգարին՝ նորածին հայրենիքի շահերը պաշտպանելու եւ հայրենակիցներու ծանր վիճակը թերեւցնելուն համար:

Տիանա մեռաւ 1937-ին, թաղուեցաւ Եոքոհամայի օտար երկրացիներու գերեզմանատունը, ամուսինի կողքին:

2010-ին Ճափոնի մէջ Հայաստանի դեսպանութիւնը երեկոյթ մը կազմակերպեց Տիանայի 141-րդ տարեդարձին առիթով: Ներկայ էին անոր թոռն ու ծոռը, որոնք դեսպանութեան նուիրեցին իրենց ընտանիքին պատկանող արխիւային նիւթեր, ինչպէս նաեւ՝ Տիանային ուղղուած Հ. Օհանջանեանի նամակին լուսապատճէնը:

ՇԱԲԹՈՒԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

*Երկու շիրիւմ իրար կից,
Յաւերժական լուռ գրկից,
Թախծում են պաղ ու խորհում
Թէ՛ ի՛նչ տարան աշխարհքից:*

Յովհաննէս ԹՈՒՄԱՆԵԱՆ

WWW.ARMENIANPRELACYKW.ORG